ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԳԾՁԲ-04-17/14

ք. Երևան **«28» ապրիլի 2017թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդնա տուռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Խաչատրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պաշտոնական պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրֆդդդդատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 071 250 (մեկ միլիոն յոթանասունմեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա *կողմ հանդիսացող անձի* տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Էդնատուռ» ՍՊԸ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3	Ք.Երևան, Բաղրամյան 1
ՀՎՀՀ 02647057	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016	Հ/Հ 220113331452000
Հ/Հ 900013574018	ՀՎՀՀ 03534575
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էդնատուռ» ՍՊԸ տնօրեն՝
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝	
Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (ստորագրություն)Կ.Տ	Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ (ստորագրություն)Կ.Տ

Հավելված 1
«28» ապրիլի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԳՁԲ-04-17/14
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայություն				
անվանումը	**տեխնիկական բնութագիրը**	**Ծառայության ընդհանուր առավելագույն գումարը /ՀՀ դրամ/**	**Մատուցմանման ժամկետը և վայրը**	**Վճարման պայմանները**
Պաշտոնական պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայություններ	. **Փոխադրման ծառայություններ,** «Զվարթնոց» օդանավակայանում Եվրոպայի և ԱՊՀ երկրներից ժամանող օտարազգի մասնակիցների դիմավորում ու տեղափոխում «Double Tree by Hilton» հյուրանոց և հակառակ ուղղությամբ: Հյուրերի թվաքանակը՝առավելագույն 32 հոգի: Ժամանող և մեկնող մասնակիցների փոխադրումը պետք է կազմակերպվի՝ մասամբ անհատապես և մասամբ խմբային (տարբեր թվաքանակի խմբերով)՝ ելնելով նրանց ուղևորությունների չվացուցակից: Վերջինս կտրամադրվի Կատարողին միջոցառումից 1 շաբաթ առաջ: Փոխադրամիջոցները պետք է լինեն ներկայացուցչական կարգի միկրոավտոբուսներ և/կամ ավտոբուսներ:	**80 000**	**Ժամկետ՝** 1. Ժամանում՝ 2017թ մայիսի 2 –ին 2. Մեկնում՝ 2017թ մայիսի 5-ին և 6-ին **Վայր՝** 1.«Զվարթնոց» օդանավակայան-Հյուրանոց (Գ.Լուսավորչի 4/2) և հակառակը	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո՝ 20 բանկային օրվա ընթացքում
	Փոխադրման ծառայություններ,. Դեպի Գառնի-Գեղարդ ուղևորության հետ կապված փոխադրման ծառայություններ: Մասնակիցների թվաքանակը՝ առավելագույնը 30 հոգի: Փոխադրամիջոցները պետք է լինեն ներկայացուցչական կարգի միկրոավտոբուսներ և/կամ ավտոբուսներ:	**75 000**	**Ժամկետ՝** 2017թ. մայիսի 3 (Գառնի-Գեղարդ) **Վայր՝** Հյուրանոց – Գառնի – Գեղարդ –հյուրանոց	
	Փոխադրման ծառայություններ,. Դեպի Էջմիածին-Զվարթնոց ուղևորության հետ կապված փոխադրման ծառայություններ: Մասնակիցների թվաքանակը՝ ≈ առավելագույն 5 հոգի: Փոխադրամիջոցները պետք է լինեն ներկայացուցչական կարգի միկրոավտոբուսներ և/կամ ավտոբուսներ:	**27 500**	**Ժամկետ՝** 2017թ. մայսիս 3 (Էջմիածին-Զվարթնոց հյուրանոց (Գ.Լուսավորչի 4/2) և հակառակը **Վայր՝** Հյուրանոց – Էջմիածին - Զվարթնոց - հյուրանոց	
	Էքսկուրսիաների կազմակերպում , Այդ թվում՝ Էքսկուրսավարի ուղեկցությամբ այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր՝ երկու զուգահեռ խմբերով: Առավելագույնը՝ 35 մասնակից: 1. Խումբ 1՝ Գառնի-Գեղարդ՝ ≈Առավելագույն 30 մասնակից 2. Խումբ 2՝ Էջմիածին-Զվարթնոց՝ ≈Առավելագույն5 հոգի Էքսկուրսիան պետք է վարվի անգլերենով, նպատակային լսարանը՝ ոչ մասնագիտական, բարձրագույն կրթությամբ, Եվրոպայի և ԱՊՀ պետությունների միջին օղակի պետական ծառայողներ: Հուշարձանների/թանգարանների մուտքի վարձը հոգում է Կատարողը:	**87 500**	**Ժամկետ՝** 2017թ մայիսի 3-ին, ժ.16:30-ից, տևողությունը՝ 3 ժամ **Վայր՝** 1. Գառնի-Գեղարդ 2. Էջմիածին-Զվարթնոց	

	Հուշանվերների տրամադրում, Քանակը՝ 35 հատ: Հուշանվերները պետք է նվիրված լինեն Հայաստանին, դրա միջազգայնորեն ճանաչելի մշակութային խորհրդանիշ(ներ)ին: «Armenia» կամ համարժեք բառի գրառման: Հուշանվերները պետք է կրեն նախևառաջ մշակութային տարր (կիրառականությունը՝ պակաս կարևոր է), լինեն հարմար օտարերկրյա պաշտոնատար անձին նվիրելու համար, չունենան միջազգային օդային փոխադրման համար անհարմարավետ հատկանիշներ (մեծ չափեր, ծանր քաշ, արագ վնասվող, փխրուն նյութ, փաթեթավորման բացակայություն, հեղուկի պարունակություն, արտահանման համար սահմանափակված և այլն):	**210 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 2-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
	Գրենական պիտույքներ* 1. Գրիչ, կապույտ թանաքով, գելային՝ 70 հատ, 2. Անվանաքարտ (բեյջ), ժապավենով՝ 35 հատ, 3. Թղթապանակ, բարակ, ստվարաթղթե, A4 չափսի՝ 35 հատ, 4. Մասնակցի ուսումնական նյութերի պանակ, առնվազն 100 տպագիր էջեր պարունակելու համար՝ 45 հատ, 5. Նոթատետր, A5 չափսի, կոշտ կազմով, ≈50 էջ պարունակությամբ՝ 70 հատ	**165 250**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 2-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
	Տպագրական աշխատանքներ Սեղանի ցուցանակների համար ներդիրների տպագրություն՝ 35 հատ: Սեղանի ցուցանակների համար ներդիրները պետք է լինեն 23x17 սմ չափսի, տպագրված՝ թղթի վրա, գունավոր, միակողմանի: Յուրաքանչյուր ներդրի վրա պետք է տպագրվի՝ կոնկրետ մասնակցի անունը, ազգանունը, պետության անվանումը և դրոշը:	**17 500**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 2-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
	Տպագրական աշխատանքներ Մասնակիցների ընդհանուր լուսանկարների տպագրություն՝ 35 օրինակից: Լուսանկարները պետք է լինեն A4 չափսի, ունենան տպագիր գրառում՝ IOTA-ի և միջոցառման անվանման, վայրի ու ժամանակահատվածի մասին: Լուսանկարները պետք է պատրաստ լինեն և տրամադրվեն պատվիրատուին՝ 04.05.2017թ. առավոտյան:	**52 500**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 2-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
	Գովազդային վահանակներ (բաններներ) Քանակը՝ 2 հատ: Վահանակները պետք է լինեն շարժական, պատրաստված բաններային կտորից (շերտից), և ունենան համապատասխան հարմարանքներ: 1. Վահանակներից մեկը՝ ≈95x170 սմ չափսի, պաստառի վրա գունավոր տպագրված՝ IOTA-ի անվանումը և խոչհրդանիշը, միջոցառման անվանումը և անցկացման վայրն ու ժամկետը: 2. Վահանակներից մյուսը՝ ≈200x400 սմ չափսի, պաստառի վրա գունավոր տպագրված՝ IOTA-ի և ՀՀ հարկային ծառայության անվանումները և խորհրդանիշները:	**36 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ. մայիսի 2-ը, **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
	Թարգմանչական ծառայություններ Բանավոր հայերեն-անգլերեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն՝ մեկ ժամ տևողությամբ:	**20 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ. մայիսի 2-ը **Վայր՝** *Հյուրանոց* (Գ.Լուսավորչի 4/2)	

	Պաշտոնական ընթրիք՝ ≈առավելագունը 25 անձի համար:	**300 000**	**Ժամկետ՝** 2017թ. մայիսի 5-ին, ժ.20:00, **Վայրը՝** «Երևան պանդոկ» ռեստորան (Տերյան 91)	

*Գրենական պիտույքներ, որոնց վրա պետք է տպագրված լինեն միջոցառման և կազմակերպիչների անվանումները ու խորհրդանիշների պատկերները: Բոլոր տպագրությունները պետք է լինեն գունավոր: Գրառումների տեքստերը և խորհրդանիշների պատկերները կտրամադրվեն: Յուրաքանչյուր անվանաքարտի վրա պետք է տպագրված լինի կոնկրետ մասնակցի անունը և ազգանունը, IOTA-ի խորհրդանիշի պատկերը և միջոցառման անվանումը, իսկ դարձերեսի վրա միջոցառման օրակարգը: անվանաքարտի ժապավենի վրա պետք է տպագրված լինեն IOTA-ի խորհրդանիշի պատկերը և միջոցառման անվանումը: Բեյջի ժապավենի վրա պետք է տպագրված լինեն IOTA-ի խորհրդանիշի պատկերը:
Մյուս պիտույքների արտաքին մակերեսի վրա պետք է տպագրված լինեն IOTA-ի խորհրդանիշի պատկերը և միջոցառման անվանումը: Անհրաժեշտ տվյալները կներայացվեն Պատվիրատուի կողմից, իսկ ընդհանուր դիզայնը պետք է կատարի Կատարողը՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:
**Գնումն իրականացնելիս հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 10.09.2009թ.N 1036-Ն որոշումը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էդնատուռ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220113331452000
ՀՎՀՀ 03534575
«Էդնատուռ» ՍՊԸ տնօրեն՝

Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 2
«28» ապրիլի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԳՁԲ-04-17/14
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ.արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
1	4237	**Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայություններ**					1 071 250	1 071 250	11 071 250	1 071 250	1 071 250	1 071 250	1 071 250	1 071 250	**1 071 250**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Էդնատուռ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220113331452000
ՀՎՀՀ 03534575
«Էդնատուռ» ՍՊԸ տնօրեն՝

Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված 3
28 » ապրիլի 2017 թ կնքված
N ՈՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԳՃՁԲ-04-17/14
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«28» ապրիլի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԳՁԲ-04-17/14
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
---
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն